

Գումարներ

Տրված է n տարբեր ամբողջ դրական թվերից կազմված հաջորդականություն՝ a_1, a_2, \dots, a_n :

Դիտարկում ենք այն թվերը, որոնք ստացվում են որպես մեկ կամ ավելի տարրերի գումարներ տրված հաջորդականությունից, ընդ որում՝ յուրաքանչյուր տարր կարող է մասնակցել այդպիսի գումարներում առավելագույնը մեկ անգամ:

Նշենք, որ մեկ թվի գումար ասելով հասկանում ենք հենց այդ թիվը:

Գրեք ծրագիր, որը հաշվում է և արտածում թե բոլոր այդ գումարների արդյունքում քանի տարբեր արժեք կարելի է ստանալ:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրվում է n -ը ($1 < n \leq 70$):

Երկրորդ տողում տրվում են հաջորդականության տարրերը՝ $a_1 a_2 \dots a_n$ ($1 \leq a_i \leq 1000$):

Ելքային տվյալներ

Ձեր ծրագիրը պետք է ստանդարտ ելքում արտածի մեկ ամբողջ թիվ, որը ցույց է տալիս բոլոր գումարների հնարավոր տարբեր արժեքների քանակը:

Օրինակ

Մուտք	Ելք
4 1 6 4 3	12

Ենթախնդիրներ

Համար	Սահմանափակում	Միավոր
0	Օրինակը	0
1	$1 < n \leq 25$	40
2	$1 < n \leq 70$	60